ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի ծառայությունը հեթանոսներին	Հայտնված խորհուրդը	Իմաստության աղոթք	Պողոսի գործը հեթանոսների համար	Պողոսը, Խորհրդի Ծառան
3:1-13	3:1-7	3:1-6	3:1-6	3:1-13
	Խորհրդի նպատակը	3:7-13	3:7-13	
	3:8-13			
Քրիստոսի Սերը ճանաչել	Խորհրդի գնահատանքը		Քրիստոսի Սերը	Պողոսի աղոթքը
3:14-19	3:14-21	3:14-19	3:14-19	3:14-19
3:20-21		3:20-21	3:20-21	3:20-21

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3:1-21

Ա. Հաշվի առնելով Պողոսի կողմից գրված այս շրջանառվող նամակի՝ Եփեսացիների, աստվածաբանական նպատակը (նպատակները), պարզ է, որ վարդապետական բաժնում Պողոսի ներկայացրած երեք գլխավոր ճշմարտությունները առնչվում են գնոստիկ սուտ վարդապետների հետ: (Տե՛ս Ներածությունը)
   1. Եփես. 1-ը մեծարում է Հորը Նրա «ժամանակներից առաջ» Քրիստոսի փոխանորդական քավության և Հոգու հարատևող ներկայության մեջ արտահայտած սիրո համար:
   2. Եփես. 2:1-10 հայտնում է Հոր սքանչելի սերը և ողորմությունը մեղավոր, անօգնական մարդկության հանդեպ:

3. Եփես. 2:11-3:13 հայտնում է Աստծո հավիտենական ծրագրի մասին, որը բովանդակում է բոլոր մարդկանց՝ Քրիստոսի միջոցով ձրի փրկություն ստանալու (տես՝ Ծնն. 3:15), լինի դա հրեա, թե հեթանոս, կին թե տղամարդ, գերի թե ազատ:

Արդյունքում, Եփես. 2:11-3:13 հայտնում է Աստծո հավիտենական, տիեզերական փրկության ծրագիրը (տես՝ Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ փրկության հավիտենական ծրագիրը), Եփես. 2:1-10 հայտնում է Աստծո սիրող սիրտը և Եփես. 1:3-14-ը հայտնում է Աստծո հավիտենական նպատակը՝ մարդկության Քրիստոսակերպությունը: Աստված կատարելապես տեղյակ էր մարդկության ապստամբության վերաբերյալ և ծրահժգրել էր այս խնդրի լուծումը, անգամ ստեղծագործությունից առաջ (տես՝ Եփես. 1:4):

Բ. Եփես. 2:11-22 և 3:2-13 հատկանշում է Պողոսի գրքերում արծարծվող Աստծո խորհրդի մի քանի սահմանումներից մեկը: Հրեան ու հեթանոսը միավորվեցին մի նոր հաստատության՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 3:3-ում:

Գ. Պողոսը Եփես. 3:1-ում սկսում է փառաբանության մի աղոթք, սակայն հեթանոսների համար այս խորհրդի վերաբերյալ խոսելով շեղվում է և ապա նորից վերադառնում իր աղոթքին 14-21 համարներում:

Դ. Աղոթքը, որը սկսում է համար 1-ում և ավարտվում Եփես. 3:14-21-ում, բաժանվում է երեք ենթանախադասությունների: (Տե՛ս ամբողջական գրառումը Եփես. 3:16-19-ում):
1. հավատացյալները ստանում են ներքին զորություն՝ ուժ, Եփես. 3:16-17ա
   ա. Հոգու զորությամբ
   բ. Քրիստոսի ներբնակության շնորհիվ
2. սուրբերը կարող են լիովին հասկանալ ավետարանի ճշմարտությունը և խորհուրդը, Եփես. 3:17բ-19ա
   ա. ըմբռնել՝ հասկանալ, որպեսզի պահեն
   բ. իմանալ փորձառությամբ՝ կյանքով
3. հավատացյալները լցվում են Աստծո լիությամբ (*plērōma*), Եփես. 3:19բ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3:1-13

[1]Սրա համար, ես՝ Պողոս, Հիսուս Քրիստոսի բանտարկյալը ձեզ՝ հեթանոսներիդ համար, [2]եթե լսել եք Աստծո շնորհի տնօրինման մասին, որ ինձ է տրվել ձեզ համար, [3]թե ինչպես այդ խորհուրդը Նա ինձ հայտնությամբ ցույց տվեց (ինչպես նախապես համառոտակի գրել եմ ձեզ, [4]որը, երբ կարդաք, կհասկանաք իմ տեղյակ լինելը Քրիստոսի խորհրդին) [5]որը ուրիշ ժամանակաշրջաններում մարդկանց որդիներին ցույց չտրվեց, ինչպես այժմ հայտնված է Իր սուրբ առաքյալներին ու մարգարեներին Սուրբ Հոգու միջոցով, [6]թե հեթանոսները Քրիստոսի մեջ ժառանգակիցներ պիտի լինեն, նույն մարմնից և խոստման մասնակիցներ՝ ավետարանի միջոցով, [7]որի սպասավորն եմ ես՝ Աստծո շնորհի պարգևի համեմատ, որ ինձ տրվեց Նրա զորության ներգործությամբ: [8]Ինձ, որ հետինն եմ բոլոր սրբերից, այս շնորհը տրվեց, որպեսզի հեթանոսների մեջ ավետարանեմ Քրիստոսի անքննելի հարստությունները, [9]և որպեսզի բոլոր մարդիկ տեսնեն ու իմանան, թե ի՛նչ է այն խորհրդի հաղորդակցությունը, որ աշխարհի սկզբից թաքնված էր Աստծո մեջ, որ ստեղծեց ամեն ինչ Հիսուս Քրիստոսով, [10]որպեսզի այժմ եկեղեցու միջոցով Աստծո բազմատեսակ իմաստությունը հայտնի լինի երկնային տեղերում եղող իշխանություններին և զորություններին, [11]ըստ Նրա հավիտենական նպատակի, որ Նա կատարեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով, [12]Ում միջոցով և Ում հավատով մենք համարձակություն ունենք և վստահությամբ մուտք Աստծո մոտ: [13]Ուստի աղաչում եմ, որ չթուլանաք ձեզ համար իմ կրած նեղությունների պատճառով, որ ձեր փառքն է:

3:1 «Սրա համար» Եփեսացիների 3:2-13-ը Եփես. 2:11-22-ի աստվածաբանական շարունակությունն է: Պողոսը կրկնում է Եփես. 3:14-ում արձանագրած այս արտահայտությունը, որտեղ վերադառնում է Աստծուն ուղղված իր աղոթքին: (Իր կոչման և հեթանոսների մեջ ծառայության վերաբերյալ 2:2-13-ի փակագծերից հետո):

❖ **«Հիսուս Քրիստոսի բանտարկյալը ձեզ՝ հեթանոսներիդ համար»** Երբ Պողոսը գրեց այս գիրքը, նա բանտարկված էր Հռոմում՝ Երուսաղեմում տեղի ունեցած խռովության պատճառով (տես՝ Գործք 21:27-22:22): Խռովությունը տեղի էր ունեցել, երբ հրեաները մեղադրել էին Պողոսին, որ իբրև Տրոփիմոս անունով մի նորահավատ եփեսացու մտցրել էր Տաճար: Հրեաները գիտեին, որ նա հեթանոս էր և դա նրանց կատաղեցրել էր (տես՝ Եփես. 2:14):

Պողոսը զգում էր հեթանոսներին ծառայելու հատուկ կանչը (տես՝ Եփես. 3:2,8, Գործք 9:15, 22:21, 26:16, 18, Հռոմ. 11:13, 15:16, Գաղ. 1:16, 2:9, 1 Տիմ. 2:7, 2 Տիմ. 4:17):

3:2 «եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ չիշտ է ըստ հեղինակի տեսակետի կամ նրա գրականական նպատակների: Հունարենում 2-7 համարները կազմված է մեկ նախադասությունից: Այս հավատացյալները լսել էին Պողոսի ծառայության և կոչման վերաբերյալ: Պողոսը Փոքր Ասիայում գտնվող բոլոր եկեղեցիների հիմնադիրը <u>չէր:</u>

❖ **«Աստծո շնորհի տնօրինման մասին, որ ինձ է տրվել ձեզ համար»** Պողոսը զգում էր, որ իրեն վստահվել է ավետարանը (տես՝ Եփես. 3:9, 1 Կորնթ. 4:1-2, 9:17, Գաղ. 2:7, Կող. 1:25, 1 Թեսաղ. 2:4, 1 Տիմ. 1:11, 1 Պետ. 4:10): Աստծո շնորհքը տրվեց Պողոսին որպես պարգև՝ 7-8 հհ, և որպես սպասավորություն՝ Եփես. 3:2: Սա Աստծո Ուխտի զույգ առանձնահատկությունն է:

Իրականում բոլոր հավատացյալները Սուրբ Հոգուց պարգևներ ունեն (տես՝ 1 Կորնթ. 12:7, 11, Եփես. 4:7) և հռչակված են Մեծ Հանձնարարության սպասավորներ՝ տնտեսներ (տես՝ Մատթ. 28:19-20): Դա Մեծ Տարբերակ չէ: Այն բովանդակում է մտադրված ավետարանչություն և Քրիստոսակերպ հասունություն: Անհնար է լինել բարի և հավատարիմ տնտես և չհասկանալ հանձնարարությունը:

3:3 «հայտնությամբ» Սա կարող է վերաբերել՝

1. Դամասկոսի ճանապարհին իր ունեցած փորձառությանը (տես՝ գործք 9:3-8, 22:6-11, 26:12-18)
2. Դամասկոսում Անանիայի ուսմունքներին (տես՝ Գործք 9:10-19, 22:12-16)
3. Երուսաղեմում իր ունեցած տեսիլքին (տես՝ Գործք 22:17)
4. Արաբիայում Պողոսի ուսուցումը անձամբ համբարձված և փառավորված Հիսուսի կողմից (տես՝ Գաղ. 1:12, 17-18):

❖ **«խորհուրդը»** Պողոսն այս «խորհուրդ» տերմինը կիրառել է ավելի քան քսան անգամ մի քանի տարբեր իմաստներով: Հաճախ այն կապված է հավատացյալ հրեաների և հեթանոսների մի նոր համայնքի՝ եկեղեցու մեջ միաբանվելու ինչպես և ինչու հարցերի հետ (տես՝ Եփես. 2:11-3:13, Կող. 1:26-27):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՐՀՈՒՐԴ
SPECIAL TOPIC: MYSTERY

I. Հին Կտակարանում

Արամերեն այս բառը (BDB 1112, KB 1980), *raz*, նշանակում է «թաքցնել», «ծածուկ պահել»: Այն մի քանի անգամ գործածվում է Դանիելի գրքում (տես՝ Դան. 2:18, 19, 27, 28, 29, 30, 47, 4:9): Այն դառնում է ապոկալիպտիկ գրականության կենտրոնական

թեման և նշվում է Մեռյալ Ծովի Գալարներում: Աստված հայտնում է Իր ծածուկ խորհուրդը Իր մարգարեներին (տես՝ Ծնն. 18:17, Երեմ. 23:18, Դան. 9:22, Ամովս 3:7):

Մեռյալ Ծովի Գալարների հասարակության մեջ Աստծո հայտնության վրա խորհում էին (1) ՀԿ-յան մարգարեների խոսքի միջոցով (raz), սակայն նաև (2) «արդարության ուսուցչի» մեկնության (pesher) միջոցով: Հայտնության և մեկնության նմանատիպ երկծալք՝ երկտակ ձևաչափը առանձնահատուկ է ապոկալիպտիկ գրականությանը:

II. Սինոպտիկ (համանման) Ավետարաններում «խորհուրդ» բառը գործածվում է հոգևոր հասկացությունների համար՝ դուրս բերված, հավաքված Հիսուսի առակներից.

1. Մարկոս 4:11
2. Մատթեոս 13:11
3. Ղուկաս 8:10

III. Պողոսը այն գործածում է մի քանի տարբեր կերպերով՝

1. Իսրայելի մասամբ խստասիրտ դառնալիս՝ թույլ տալու, որ հեթանոսները նույնպես ներգրավվեն իրեն կյանքի մեջ: Հեթանոսների այս ներհոսքը մեխանիզմ էր հանդիսանալու հրեաների համար, որպեսզի ընդունեն Հիսուսին որպես մարգարեության միջի Քրիստոսը (տես՝ Հռոմ. 11:25-32):
2. Ավետարանը ազգերին հայտնելու համար, նրանց պատմելու, որ բոլորն էլ ներառված են Քրիստոսի մեջ և Քրիստոսի միջոցով (տես՝ Հռոմ. 16:25-27, Կող. 2:2):
3. Երկրորդ Գալստյան ժամանակ հավատացյալների նոր մարմինների համար (տես՝ 1 Կորնթ. 15:5-57, 1 Թեսաղ. 4:13-18):
4. Քրիստոսի մեջ ամեն բան ամփոփելիս (տես՝ Եփես. 1:8-11)
5. Հեթանոսներն ու հրեաները որպես ժառանգակիցներ (տես՝ Եփես. 2:11-3:13):
6. Ամուսնական տերմիններով Քրիստոսի և Եկեղեցու միջև մտերմիկ փոխհարաբերությունը նկարագրելիս (տես՝ Եփես. 5:22-33)
7. Ուխտի ժողովրդի մեջ ներգրավված հեթանոսներին և Քրիստոսի Հոգին նրանց մեջ ներբնակվելու, այնպես որ վերարտադրի Քրիստոսի նման լինելու հասունությունը, այսինքն՝ մարդու մեջ վերականգնի Աստծո պատկերը, որն ապականվել է (տես՝ Ծնն. 1:26-27, 5:1, 6:5,11-13, 8:21, 9:6, Կող. 1:26-28):
8. Վերջին ժամանակների Հակաքրիստոսի մասին խոսելիս (տես՝ 2 Թեսաղ. 2:1-11):

IV. Ավետարանի խորհրդի վերաբերյալ 1 Տիմ. 3:16-ում կարելի է գտնել վաղ եկեղեցու օրհներգ կամ դավանաբանություն՝ կատեքիզմ:

V. Հովհաննեսի Հայտնության գրքում այս բառը գործածվում է Հովհաննեսի ապոկալիպտիկ խորհրդապատկերների նշանակության համար՝

1. Հայտն. 1:20
2. Հայտն. 10:7
3. Հայտն. 17:5,6

VI. Այս խորհուրդները ճշմարտություններ են, որոնք մարդիկ չեն կարող բացահայտել. դրանք պետք է հայտնվեն՝ բացահայտվեն Աստծո կողմից:

VII. Տե՛ս <u>Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը:</u>

NASB	**«ինչպես նախապես համառոտակի գրել եմ ձեզ»**
NKJV	**«(ինչպես նախկինում մի քանի բառով գրեցի ձեզ)»**
NRSV	**«ինչպես վերը մի քանի բառով գրեցի ձեզ»**
TEV	**«(այս մասին համառոտ գրել եմ ձեզ. . .)»**
NJB	**«ինչպես հենց նոր շատ համառոտ նկարագրեցի»**

Մեծն բարեկարգիչ Ջոն Կալվինը կարծում էր, որ սա վերաբերում էր մի բանի, որը Պողոսը գրել էր իր նախորդող նամակում, սակայն սա ավելի լավ կարող ենք հասկանալ, եթե նկատի ունենանք Եփեսացիների նախորդող հատվածը՝ հավանաբար 2:11-22-ը: Անորոշ կատարյալ ժամանակի այս-քան տարածված կիրառությունը կոչվում է նամակագրական՝ էպիստոլյար անորոշ կատարյալ:

3:4 «երբ կարդաք» Հավանաբար սա վերաբերում է եկեղեցիներում Պողոսի նամակների հանրային ընթերցանությանը (տես՝ Կող. 4:16, 1 թեսաղ. 5:27, Հայտն. 1:3): Հիշե՛ք, որ Եփեսացիներին ուղղված թուղթը շրջանառվող նամակ էր:

3:5

NASB	**«ուրիշ սերունդներում»**
NKJV	**«ուրիշ դարերում»**
NRSV	**«նախկին սերունդներում»**
TEV	**«անցյալ ժամանակներում»**
NJB	**«անցյալ սերունդներում»**

Այժմ Աստված հստակ հայտնում է Իր դարերի հնություն ունեցող փրկության ծրագիրը ամբողջ մարդկության (տես՝ 1 Կորնթ. 2:6-9, Կող. 1:26ա)՝ հրեայի և հույնի, հարուստի ու աղքատի, գերու և ազատի, տղամարդու և կնոջ համար (տես՝ 1 Կորնթ. 12:13, Գաղ. 3:28):

❖ **«ցույց չտրվեց. . . այժմ հայտնված է»** Սրանք երկու կրավորական բայեր են, որոնք ցույց են տալիս Աստծո գործողությունները այս մեծ ճշմարտության հայտնության մեջ՝ նախքան ժամանակը (1:3-6), ժամանակի մեջ (1:7-12) և ժամանակի միջով (1:13-14): ՆԿ-յան հավատացյալները ավելի շատ բան գիտեն Աստծո և Նրա ծրագրի և Նրա Մեսիայի մասին, քան որևէ ՀԿ-յան անձ:

❖ **«Իր սուրբ առաքյալներին ու մարգարեներին»** Այս արտահայտությունը նաև գտնվում է Եփես. 2:20, 4:11-ում: Նրանք «սուրբ» են, քանի որ առանձնացված են հատուկ առաջադրանքի համար: Սա վերաբերում է ՆԿ-յան մարգարեներին (տես՝ Հատուկ Թեմա Եփես. 2:20-ում, տես՝ Եփես. 4:11, Գործք 11:27, 13:1, 15:32, 21:9,10, 1 Կորնթ. 12:28, 14:1-40): Երկու խմբերն էլ՝ առաք-յալներն ու մարգարեները (ավետարանիչների, հովիվների, ուսուցիչների հետ միասին, տես՝ Եփես. 4:11) հռչակում էին՝ քարոզում էին ավետարանի այս նորահայտ խորհուրդը, որպեսզի հավատացյալ հրեան և հեթանոսը այժմ կազմեն մի նոր մարմին՝ եկեղեցին:

3:6

NASB	**«Հեթանոսները մարմնի ժառանգակիցներ և անդամներ, և խոստմանը մասնակից անդամներ են»**
NKJV	**«Հեթանոսները լինելու են ժառանգակիցներ՝ միևնույն մարմնի, և Նրա խոստման մասնակիցները»**
NRSV	**«Հեթանոսները դարձել են ժառանգակիցներ, միևնույն մարմնի անդամներ, և խոստման մեջ բաժնեկիցներ»**
TEV	**«Հեթանոսները Աստծո օրհնություններում Հրեաների հետ բաժին ունեն. նրանք միևնույն մարմնի անդամներն են, և բաժնեկցում են խոստման մեջ»**

NJB **«հեթանոսներն այժմ բաժնեկցում են միևնույն ժառանգությունը, քանի որ միևնույն մարմնի մասն են կազմում, և միևնույն խոստումը տրվել է նրանց էլ»**

Աստծո փրկության ծրագրի հինավուրց խորհրդի ինչպիսի՛ ցնցող հայտնություն: Քրիստոսի մեջ այլևս չկա հրեա կամ հույն (տես՝ Հռոմ. 2:28-29, 3:22, 10:12, 1 Կորնթ. 12:13, Գաղ. 3:7-9, 28-29, Կող. 3:11): Այս նույն «ժառանգակիցներ» բառը նաև օգտագործվում է Հռոմ. 8:17-ում, Եբր. 11:9-ում և 1 Պետ. 3:7-ում:

Այստեղ առկա են երեք *syn* բաղադրյալներ՝ (1) «ժառանգակիցներ», (2) «նույն մարմնի անդամակիցներ», և (3) «խոստման բաժնեկիցներ»: Պողոսն այս *syn* բաղադրյալները հաճախ կիրառում է նկարագրելու հավատացյալի նոր կյանքը Քրիստոսով: Սա շատ նման է Եփես. 2:5-6-ում *syn*-ով կազմված երեք բաղադրյալներին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
SPECIAL TOPIC: YHWH'S ETERNAL REDEMPTIVE PLAN

Ընթերցողներիդ պետք է խոստովանեմ, որ այս հարցում ես կողմնակալ եմ: Իմ համակարգված աստվածաբանությունը Կալվինիզմը կամ անջատողականությունը չէ, այլ Մեծ Պատվիրանը ավետարանելը (տես՝ Մատթ. 28:18-20, Ղուկ. 24:46-47, Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված ամբողջ մարդկության համար փրկագործության ծրագիր ունի (օր.՝ Ծննդ. 3:15; 12:3, Ելից 19:5-6, Երեմ. 31:31-34, Եզեկիել 18, 36:22-39, Գործք 2:23, 3:18, 4:28, 13:29, Հռոմ. 3:9-18,19-20,21-31), բոլոր նրանց համար, ովքեր ստեղծված են Նրա պատկերով և նմանությամբ (տես՝ Ծննդ. 1:26-27): Ուխտերը Քրիստոսում միավորված են (տես՝ Գաղ. 3:28-29, Կող. 3:11): Հիսուսը Աստծո խորհուրդն է՝ առեղծվածը, որ թաքնված էր, սակայն այժմ հայտնված (տես՝ Եփես. 2:11-3:13): Սուրբ Գրքի բանալին հանդիսանում է ՆԿ-յան ավետարանը, և ոչ թե Իսրայելը:

Նախնական այս հասկացությունները իմաստավորում են Սուրբ Գրքի իմ բոլոր մեկնաբանությունները: Բոլոր տեքստերը ես կարդում եմ այդ լույսի ներքո: Իհարկե դա կողմնակալություն՝ հակվածություն է (բոլոր մեկնաբաններն էլ դա ունեն), սակայն դա Սուրբ Գրքի միջոցով ինֆորմացված ենթադրություն է:

Ծննդոց 1-2 կենտրոնացումը հանդիսանում է ՅԱՀՎԵԻ կողմից մի վայրի արարումը, որտեղ Նա և Իր մեծագույն արարչագործությունը՝ մարդը, կարող են հաղորդակցվել (տես՝ Ծննդ. 1:26,27, 3:8): Ֆիզիկական արարչագործությունը այս միջանձնային աստվածային ծրագրի փուլ է:

1. Սբ. Օգոստինոսը այն բնութագրում է որպես Աստծո կողմից յուրաքանչյուր մարդու մեջ դրած դատարկություն՝ խոռոչ, որը միայն հենց Աստված Ինքը կարող է լցնել:
2. Ս. Ս. Լյուիսը այս մոլորակը կոչում է «ձեռք տրված մոլորակ» (այսինքն՝ մարդկության համար Աստծո կողմից պատրաստված):

ՀԿ-ը ունի շատ ակնարկներ այս աստվածային ծրագրի մասին:

1. Ծննդոց 3:15-ը առաջին խոստումն է, որ ՅԱՀՎԵՆ չի թողնի մարդկությանը մեղքի և ապստամբության սարսափելի խառնաշփոթում: Այն չի վերաբերում Իսրայելին, քանի որ չկա Իսրայել, կամ ուխտի ժողովուրդ, մինչև Աբրահամի կանչը Ծննդոց 12-ում:
2. Ծննդոց 12:1-3 ՅԱՀՎԵԻ Աբրահամի նախնական կանչն է և հայտնությունը, որը կդառնա ուխտի ժողովուրդ՝ Իսրայելը: Բայց նույնիսկ այս նախնական կանչը Աստված կանխատեսել էր ամբողջ աշխարհի համար: Ուշադրություն դարձրեք Ծննդ. 12: 3:
3. Ելից 20-ում (2 Օրինաց 5) ՅԱՀՎԵՆ Իր օրենքը տվեց Մովսեսին, որպեսզի առաջնորդի Իր ընտրյալ ժողովրդին: Նկատեք, որ Ելից 19:5-6-ում ՅԱՀՎԵՆ հայտնում է Մովսեսին, որ կունենա բացառիկ փոխհարաբերություն Իսրայելի հետ: Ինչպես նաև նկատեք, որ նրանք ընտրված էին, ինչպես Աբրահամը, աշխարհը օրհնելու համար (տես Ելից 19: 5, «ամբողջ երկիրը Իմն է»): Իսրայելը պետք է ՅԱՀՎԵԻՆ ճանաչելու և Նրան հաճեցնելու համար ազգերի համար մեխանիզմ լինի: Ցավոք, նրանք ձախողեցին (տես Եզ. 36:22-38):

4. 3 Թագավորաց 8-ում Սողոմոնը տաճարը ընծայում է, որպեսզի բոլորը կարողանան գալ ՅԱՀՎԵԻ մոտ (տես՝ 3 Թագ. 8: 43,60):
5. Սաղմոսներում՝ 22:27-28, 66:4, 86: 9 (Հայտ. 15:4)
6. Մարգարեների միջոցով ՅԱՀՎԵՆ շարունակում էր բացահայտել տիեզերական փրկագործության Իր ծրագրերը:
   ա. Եսայի 2: 2-4, 12: 4-5, 25:6-9, 42:6,10-12, 45:22, 49: 5-6, 51: 4-5, 56:6-8, 60:1-3, 66: 18,23
   բ. Երեմիա - 3:17, 4: 2, 16:19
   գ. Միքիա 4:1-3
   դ. Մաղաքիա 1:11

Տիեզերական այս շեշտադրումը նպաստում է «նոր ուխտի» առաջացմանը (տես՝ Երեմ. 31: 31-34; Եզեկ. 36:22-38), որը կենտրոնանում է ՅԱՀՎԵԻ ողորմության վրա, այլ ոչ թե մեղավոր մարդկանց գործերի: Կա «նոր սիրտ», «նոր միտք» և «նոր ոգին»: Հնազանդությունը կարևոր է, սակայն դա ներքին օրենք է, և ոչ միայն արտաքին (տես Հռ. 3: 21-31):

ՆԿ-ը հստակ ամրապնդում է տիեզերական փրկագործության ծրագիրը մի քանի ձևով:

1. Մեծ Պատվիրանի՝ Մատթ.28:18-20, Ղուկ.24:46-47, Գործք 1:8
2. Աստծո հավիտենական ծրագրի (այսինքն՝ նախասահմանության)՝ Ղուկ.22:22, Գործք 2:23, 3:18, 4:28, 13:29
3. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն՝ Հովհ.3:16, 4:42, Գործք 10:34-35, 1 Տիմ.2: 4-6, Տիտոս 2:11, 2 Պետ.3: 9, 1 Հովհ.2: 2, 4:14
4. Քրիստոսը միավորում է ՀԿ և ՆԿ՝ Գաղ. 3: 28-29, Եփ. 2:11-3:13, Կող. 3:11: Բոլոր մարդկային խոչընդոտները և տարբերությունները վերացվում են Քրիստոսով: Հիսուսը «Աստծո խորհուրդն է», որը թաքնված էր, բայց հիմա հայտնված է (Եփ.2:11-3:13):

ՆԿ-ը կենտրոնանում է ոչ թե Իսրայելի, այլ Հիսուսի վրա: Ավետարանն է կարևորը և ոչ թե ազգությունը կամ աշխարհագրական շրջանը: Իսրայելը առաջին հայտնությունն էր, բայց Հիսուսը՝ վերջինը (տես՝ Մատթ.5: 17-48):

Հուսով եմ, ժամանակ կտրամադրեք կարդալու՝

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉՈՒ՞ ԵՆ ՀԿ-ՅԱՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ԱՅԴՔԱՆ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՆԿ-ՅԱՆ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻՑ</u>
<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՎԵՏԱՐԱՆԸ</u>
<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱԼ ԿԱՄ ՎՍՏԱՀԵԼ</u>
<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԸՆԴՈՒՆԵԼ», «ՀԱՎԱՏԱԼ», «ԽՈՍՏՈՎԱՆԵԼ, ԴԱՎԱՆԵԼ», «ԿԱՆՉԵԼ»</u>

3:7 Հնարավոր է սա վերաբերում է Պողոսի սկզբնական փրկությանը, սակայն կոնտեքստում կարծես թե վերաբերում է Աստծո հատուկ պարգևին՝ հեթանոսների մեջ առաքելական միսիայի համար (տես՝ Եփես.3:2, 6:20, Հռոմ.12:3, 15:15-16, 1 Կորնթ.3:10, 15:10, Գաղ.2:9, Կող.1:25):

❖ **«սպասավոր»** «Deacon» / «սարկավագ» անգլերեն բառը ստանում ենք հունարենում ծառայել ընդհանուր բայից (*diakoneō,* տես՝ Մատթ.8:15 կամ *diakonia,* տես՝ Եփես.4:12):

❖ **«Նրա զորության ներգործությամբ»** Փրկությունը և արդյունավետ՝ պտղաբեր ծառայությունը Աստծուց են, ոչ թե Պողոսից (տես՝ Եփես.1:19, Կող.1:29):

3:8-12 Սա մի հունարեն նախադասություն է: Այս երկար նախադասությունները հատկանշական են Եփեսացիներին:

3:8 «հետինն եմ բոլոր սրբերից» Բառացի սա նշանակում է «ամենափոքրը», որը գերադրականի հետ համեմատական բառ է (տես՝ 1 Կորնթ. 15:9, 1 Տիմ. 1:15): Պողոսը խոնարհվել էր իր նախկին կրոնավոր ինքնարադարացման կյանքի և ագրեսիվ հալածանքների պատճառով: Նա նաև հիացած էր Աստծո սիրով, մի այնպիսի հալածողի հանդեպ, որը վնաս էր հասցրել Իր եկեղեցուն: Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբեր, Կող. 1:2-ում:

NASB	**«անհատակ»**
NKJV	**«անքննելի»**
NRSV	**«անծայրածիր»**
TEV, NJB	**«անսահման»**

Ինչպիսի՛ հզոր խոսք է Քրիստոսում Աստծո հարստությունները նկարագրելու համար (տես՝ Հռոմ. 11:33 և Հոբ 5:9, 9:10-ը Սեպտուագինտայի թարգմանությամբ): Մարդկությունը չի կարող հայտնաբերել Աստծուն, սակայն Աստված ընտրել է Ինքը հայտնել մեզ Իրեն:

❖ **«Քրիստոսի հարստությունները»** «Հարստություններ» խոսքը Պողոսի ամենասիրելի բառերից մեկն է (տես՝ Եփես. 1:7, 18, 2:4,7, 3:8,16): Գլուխ 1-ում նա խոսում էր Հայր Աստծո հարստությունների մասին: Այստեղ Պողոսը դրանք հանձնում է Որդուն: ՆԿ-յան հեղինակները հաճախ են ակնարկում Հիսուսի աստվածությունը՝ Նրան ՅԱՀՎԵԻ տիտղոսներն ու ֆունկցիաները վերագրելով (օրինակ՝ տես «Աստված մեր Փրկիչը» և «Հիսուս Քրիստոս մեր Փրկիչը» Տիտոս 1:3-ում և 1:4, 2:10 և 2:13, 3:4 և 3:6-ում):

3:9

NASB	**«լույսի մեջ բերելու»**
NKJV	**«որ բոլոր մարդիկ տեսնեն»**
NRSV	**«որ բոլորը տեսնեն»**
TEV	**«որ բոլոր մարդկությունը տեսնի»**
NJB	**«բացատրելով»**

Բառացի սա նշանակում է «լույսը միացնել» (տես՝ Եփես. 1:18, Գործք 26:18, 2 Կորթն. 4:6, 1 Պետ. 2:9): Միայն Հոգին կարող է այս հայտնությունը հասցնի խավարած սրտին (տես՝ Հովհ. 1:4-5, 6:44, 65): Անգլերենի "photo" բառը ստացել ենք հունարեն այս բառից:

NASB	**«խորհրդի գործադրությունը»**
NKJV	**«խորհրդի հաղորդակցությունը»**
NRSV	**«խորհրդի ծրագիրը»**
TEV	**«Աստծո ծածուկ ծրագիրը պետք է գործադրվի»**
NJB	**«ինչպես պետք է ազատագրվի խորհուրդը»**

Սա բառացի «տան տնտեսություն է (*oikonomia*)»: Սա Պողոսի ամենասիրելի խոսքերից մեկն է Ադամի բոլոր որդիների համար Քրիստոսում Աստծո հավիտենական փրկության ծրագրի համար (տես՝ Եփես. 1:10, 3:2,9, Կող. 1:25):

Հունարեն ձեռագրային մի խնդիր կա «տնտեսություն» տերմինի հետ կապված ի հակադրություն «հաղորդակցություն» տերմինի: «Տնտեսություն» տերմինը գտնվում է P^{46} –ում, բոլոր ունցիալ (մեծատառերով) ձեռագրերում, հիմնական փոքրատառ ձեռագրերում, բոլոր հնագույն տարբերակներում, և բոլոր վաղ եկեղեցու հայրերի մեջբերումներում, հետևաբար՝ «տնտեսություն» տերմինը բնագրային բառն է: Տե՛ս Տեքստային Քննադատություն քննարկումը Հավելված Երկու բաժնում: «Խորհրդի» համար տե՛ս Հատուկ Թեմա Եփես. 3:3-ում:

❖ **«Աստված, որ ստեղծեց ամեն բան»** Սա հերքում էր մատերիայի և հոգու միջև առկա գնոստիկ դուալիզմը (տես՝ Եփես. 2:10): Կողոսացիների զուգահեռ համարում, Հիսուսը բնորոշվում է որպես

ստեղծագործության մեջ Հայր Աստծո գործակալը (տես՝ Հովհ. 1:3,10, Հռոմ. 11:36, 1 Կորնթ. 8:6, Կող. 1:15-16, Եբր. 1:2-3, 2:10):

3:10

NASB, NKJV	**«Աստծո բազմատեսակ իմաստությունը»**
NRSV	**«Աստծո իմաստությունը իր առատությամբ»**
TEV	**«Աստծո իմաստությունը իր բազմաթիվ դրսևորումներով»**
NJB	**«իրականում ինչքա՜ն հասկանալի է Աստծո իմաստությունը»**

Սա մի բաղադրյալ բառ է, որը շեշտադրում է Աստծո «բազմազույն, բազմատեսակ» իմաստությունը: 1 Պետ. 1:6-ում այն վերաբերում է բազմատեսակ չարչարանքներին, իսկ 1 Պետ. 4:10-ում՝ Աստծո բազմատեսակ շնորհքներին: Այս սքանչելի Աստծո բազմակողմանի ճշմարտությունը լավագույնս կարելի է տեսնել Հռոմ. 11:33-36 և Եփես. 3:18-21-ում Պողոսի դավանաբանության՝ դոքսոլոգիայի մեջ:

❖ **«եկեղեցին»** *Ekklesia* տերմինն է կիրառվում Սեպտուագինտայում (LXX), որպեսզի թարգմանվի եբրայերեն «Իսրայելի ժողովք (*qahal*)» տերմինը (տես՝ Ելից 12:6, 16:3, Թվոց 20:4, Ղևտ. 4:13): Սա այս տերմինի կիրառություններից մեկն է Եփեսացիներում (տես՝ Եփես. 1:22, 3:10, 21, 5:23, 24, 25, 27, 29, 32): Պողոսը եկեղեցին կոչում է Քրիստոսի մարմինը թե՛ Եփես. 1:22-23-ում և թե՛ Կողոսացիների 1:24-ում: Վաղ եկեղեցին իրեն դիտարկում էր որպես Աստծո ՀԿ-յան ճշմարիտ ժողովուրդը՝ Հիսուսի Քրիստոս Մեսիան որպես Գլուխ:

Եփեսացիների և Կողոսացիների միջև գրականական անսովոր կապերից մեկն այն է, որ Եփեսացիներում այս տերմինը վերաբերում է տիեզերական եկեղեցուն (տես՝ Մատթ. 16:18, Գաղ. 1:13), մինչ Կողոսացիներում սովորաբար այն վերաբերում է տեղական եկեղեցուն (1 Կորնթ. 10:32, 12:28, 15:9, Գաղ. 1:12, Փիլ. 3:6): Սա ցույց է տալիս, որ Եփեսացիներին ուղղված թուղթը շրջանառվող նամակ է:

Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:18-ում:

❖ **«հայտնի լինի»** Հրեշտակները փափագում էին իմանալ Աստծո ծրագիրը (տես՝ 1 Պետ. 1:12): Աստված օգտագործեց Իր սերը Եկեղեցու հանդեպ, որպեսզի հայտնի Իրեն մարդկությանը և հրեշտակներին (տես՝ Եփես. 2:7, 1 Կորնթ. 4:9):

❖ **«իշխանություններին և զորություններին»** Սա վերաբերում է իշխանությունների հրեշտակային մակարդակներին՝ թե՛ բարի և թե՛ չար (տես՝ Հռոմ. 8:38-39, 1 Կորնթ. 2:8, Եփես. 1:21, 6:12, Կող. 1:16, 2:10, 15, 20): Սա գնոստիցիզմի աստվածաբանական կարևոր առանձնահատկություններից էր: Նրանց համար փրկությունը ծածուկ գիտության առևտուր էր, որպեսզի մարդը կարողանար անցնել այս հրեշտակային մակարդակների (*աէոնների*) միջով՝ հասնելու բարձրյալ, բարի աստծուն:

Այս հրեշտակային մակարդակների համար ՆԿ-ում կիրառվող տերմինների ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ Ջորջ Ի. Լեդգի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ՝ 401 /George E. Ladd's *A Theology of the New Testament*/: Հրեշտակային էակների այս կարգերն ու աստիճանները ՆԿ-ում որևէ տեղ չեն քննարկվում կամ սահմանվում: Զգուշացե՛ք այն հետաքրքրասիրությունից և աստվածաբանական համակարգերից, որոնք փորձում են վերջնական՝ հստակ պատասխանել այն հարցերին, որոնց ՆԿ-ը թողնում է անորոշ:

Այս զգուշացման մի լավ օրինակ առնչվում է այս հրեշտակային կարգերի հետ: Որոշ համարներում նրանք չար չեն, այլ հավանաբար այս մեղավոր՝ ընկած աշխարհի մասն են կազմում, որոնք ստիպում են մարդկանց ապրելու առանց Աստծո: Այս տեսության շուրջ մի հետաքրքիր գիրք է Հենդրիկ Բերխոֆի *Քրիստոսը և Իշխանությունները*, Հերալդ Հրատարակչություն /Hendrik Berkhoff's *Christ and the Powers*, Herald Press/: Տե՛ս Հատուկ Թեմա. Հրեշտակները և Պողոսի Գրքերը, Եփես. 6:12 և *Archē* Կող. 1:16:

❖ **«երկնային տեղերում»** Այս տեղի պարագա չեզոք հոգնակի ածականը (*epouranious*)՝ «երկնային տեղերում» կիրառվում է միայն այստեղ՝ Եփեսացիներում (տես՝ Եփես. 1:20, 2:6, 3:10, 6:12): Բոլոր կիրառությունների համատեքստից պետք է, որ նշանակի հոգևոր տիրույթ, որտեղ հավատացյալները ապրում են այստեղ և հիմա, ոչ թե երկնքում:

3:11 «հավիտենական նպատակ/ներ/» Սա բառացի նշանակում է «դարերի նպատակը» (տես՝ Եփես. 1:9-10): Այս տերմինը կիրառվում է հունարեն դասականներում, որը վերաբերում է նախագծված ծրագրի: Աստված անակնկալի չի եկել և Նա չունի երկրորդ ծրագիր (Ղուկաս 22:22, Գործք 2:23, 3:18, 4:28, տե՛ս Հատուկ Թեմա. ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը):

Ի՞նչ էր Աստծո հավիտենական ծրագիրը: Սա հստակեցված է Ծննդոց 1-3-ում: Աստված ստեղծեց մարդկությանը փոխհարաբերության՝ հաղորդակցության համար (տես՝ Ծննդ. 1:26-27, 3:8). այդ փոխհարաբերությունը խախտվեց մարդու ապստամբության պատճառով (տես՝ Ծննդ. 3): Աստծո պատկերի և փոխհարաբերության վերականգնումը մարդու հետ (հրեայի և հեթանոսի) դարձավ Աստծո գործունեության նպատակը: Նպատակը իրականացվեց Քրիստոսի գործի (տես՝ Ծննդ. 3:15) և Հոգու ծառայության շնորհիվ (տես՝ Հովհ. 16:8-14):

3:12

NASB, NKJV, NRSV	**«համարձակություն»**
TEV	**«ազատություն»**
NJB	**«համարձակ»**

Այս տերմինը կիրառվում է խոսքի ազատության համար, սակայն հետագայում ստացել է իշխանության վրա կարգված ինչ-որ մեկին մոտենալու համարձակության նշանակությունը (տես՝ Եբր. 4:16, 10:19, 35, 1 Հովհ. 2:28, 3:21): Քրիստոսի մեջ հավատացյալներն ունեն համարձակություն:

NASB	**«վստահ մուտքի իրավունք»**
NKJV	**«մուտքի իրավունք վստահությամբ»**
NRSV	**«վստահություն»**
TEV	**«լիարժեք վստահությամբ»**
NJB	**«կատարյալ վստահությամբ»**

Այս տերմինը կիրառվում է Սեպտուագինտայում (LXX) արքային անձնապես ներկայացնելու՝ ծանոթացնելու համար: Այս գաղափարը շեշտադրվում է Եփես. 2 և Հռոմ. 5:2-ում: Հավատացյալները մոտենում են Հորը միայն Քրիստոսի միջոցով (տես՝ 1 Պետ. 3:18): Նա է նրանց միակ միջնորդը (տես՝ 1 Տիմ. 2:5): Քրիստոսի մեջ հավատացյալներն ունեն համարձակ մուտքի իրավունք:

Բարեկարգման՝ ռեֆորմացիայի կողմից շեշտադրված «հավատացյալի քահանայությունը» պատասխանն էր Կաթոլիկ Եկեղեցու իշխանամետ մոտեցմանը: Այնուհանդերձ սուրբգրային առումով շեշտադրումը երբեք էլ «հավատացյալի» վրա չի եղել, այլ «հավատացյալների»: Արևմտյան Քրիստոնեությունը մեծարել է անհատին՝ անջատելով նրան ընդհանուր մարմնից: Քրիստոնյաները պետք է լինեն քահանաներ թե՛ ավետարանական և թե՛ հավաքական իմաստով, ոչ թե անհատ արտոնյալ պաշտոնով: Ճիշտ է, որ մարդիկ դառնում են հավատացյալներ անհատապես, սակայն Քրիստոնեությունը հավաքական փորձառություն է:

❖ **«Ում հավատով /Նրա վրա ունեցած հավատի միջոցով/»** Հիսուսն Աստծո բոլոր հոգևոր օրհնությունների համար փոխանցման միջոց է հանդիսանում (տես՝ Եփես. 1:4, 7, 9, 10 (երկու անգամ), Եփես. 1:12, 13 (երեք անգամ)):

Բառացի սա նշանակում է «հավատարմություն նրան» (տես՝ Գաղ. 2:16, 3:22): Եթե դա սեռական հոլով է խնդրի տեսքով, ապա հավատացյալները վստահում են Քրիստոսին: Նա վստահելի է: Եթե այն ենթակայական սեռական հոլով է, ապա վերաբերում է Քրիստոսի «հավատարմությանը» (ՀԿ-

յան իմաստով կամ տերմինով): Հավատարմություն ՀԿ-ի Օրենքը կատարելու (Նրա կյանքը) և մեղքերի համար Իրեն զոհաբերելու իմաստով (Նրա մահը):

3:13 «աղաչում եմ, որ չթուլանաք» Սա ներկա ժամանակի չեզոք սեռի սահմանական եղանակ է, որը նշանակում է «դուք ինքներդ շարունակեք չթուլանալ»: Քերականորեն սա կարող է վերաբերել Պողոսին կամ Եփեսոսի եկեղեցուն: Շատ մեկնաբաններ համաձայն են, որ դա վերաբերում է այն եկեղեցիներին, որոնց դիմում է Պողոս առաքյալը իր այս շրջանառվող նամակով: Պողոսն այս արտահայտությունը հաճախ է գործածում (տես՝ 2 Կորնթ. 4:16, Գաղ. 6:9, 2 թեսաղ. 3:13):

❖ **«ձեզ համար իմ կրած նեղությունների պատճառով»** Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՂՈՒԹՅՈՒՆ (*thlipsis*)
SPECIAL TOPIC: TRIBULATION (*thlipsis*)

Պետք է ինչ-որ աստվածաբանական տարբերություն լինի Պողոսի կողմից այս տերմինի (*thlipsis*) կիրառության և Հովհաննեսի կողմից այս տերմինի կիրառության միջև:

Ա. Պողոսի կիրառությունը (որը արտացոլում է Հիսուսի կողմից կիրառությունը)
1. Մեղավոր աշխարհում ներգրավված խնդիրները, տառապանքները, չարիքը
   ա. Մատթ. 13:21
   բ. Հռոմ. 5:3
   գ. 1 Կորնթ. 7:28
   դ. 2 Կորնթ. 7:4
   ե. Եփես. 3:13
2. Անհավատների պատճառով խնդիրները, տառապանքները, չարիքը
   ա. Հռոմ. 5:3, 8:35, 12:12
   բ. 2 Կորնթ. 1:4,8, 6:4, 7:4, 8:2,13
   գ. Եփես. 3:13
   դ. Փիլ. 4:14
   ե. 1 Թեսաղ. 1:6
   զ. 2 Թեսաղ. 1:4
3. Վերջին ժամանակների խնդիրները, տառապանքները, չարիքը
   ա. Մատթ. 24:21,29
   բ. Մարկոս 13:19,24
   գ. 2 Թեսաղ. 1:6-9

Բ. Հովհաննեսի կիրառությունը՝
1. Հովհաննեսը Հայտնության գրքում հատուկ սահմանագիծ՝ տարբերություն է դնում *thlipsis* –ի և *orgē* –ի կամ *thumos*-ի (բարկություն) միջև: *Thlipsis*-ը այն է ինչ անհավատներն անում են հավատացյալների հանդեպ, իսկ *orgē* –ն և *thumos* –ը այն է, ինչ Աստված է անում անհավատների հետ (տես՝ Ֆ. Ֆ. Բրյուսի *Հարցերի Պատասխաններ*, էջ՝ 139 /F. F. Bruce, *Answers to Questions*/):
   ա. *thlipsis* – Հայտն. 1:9, 2:9-10, 22, 7:14
   բ. *orgē* – Հայտն. 6:16-17, 11:18, 16:19, 19:15
   գ. *thumos* – Հայտն. 12:12, 14:8,10,19, 15:1,7, 16:1, 18:3
2. Հովհաննեսն այս տերմինը նաև կիրառում է Ավետարանում, անդրադառնալով այն խնդիրներին, որոնց հետ բախվում են բոլոր դարերի հավատացյալները՝ Հովհ. 16:33

Գ. Բոբի տեսակետը՝

1. Ես հավատում եմ, որ Եկեղեցին անցնելու է վերջին ժամանակի նեղությունների միջով (այսինքն՝ «նախքան նեղությունները», տե՛ս՝ Միլլարդ Էրիքսոնի *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2րդ խմբագրություն, էջ՝ 1230-1231 /Millard Erickon, *Christian Theology*/):
2. Եկեղեցին դարեր շարունակ չարչարվել է այս մեղավոր աշխարհում, ինչո՞ւ պետք է հավատացյալների մի սերունդ խնայվի:
3. Ես հավատում եմ մեկ երկրորդ գալստյան, որը բովանդակում է՝
   ա. հափշտակություն (1 Թեսաղ. 4:13-18)
   բ. հարություն (1 Կորնթացիների 15)
   գ. դատաստան (Մատթեոս 25, Հայտնություն 20, 1 Կորնթ. 5:10)
   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ</u>
   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ</u>
   <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՍՏԱՆԸ ՆԿ-ՈՒՄ</u>
4. Կարող եք նայել վախճանաբանական տեքստերի վերաբերյալ իմ բացատրական գրառումները անվճար հղումով՝ www.freebiblecommentary.org

❖ **«որ ձեր փառքն է»** Ստույգ կերպով, թե ինչպես էր Պողոսի նեղությունները (տես՝ Եփես. 3:1) հեթանոս եկեղեցիների փառքը՝ հայտնի չէ: Հավանաբար դրանք վերաբերում են Պողոսի փրկությանը և ծառայության կոչմանը, որը արձանագրված է Գործք 9:15-16-ում (տես՝ Գործք 20:23): Պողոսն իր ծառայությունը կատարում էր հեթանոսների մեջ, հետևաբար նրա չարչարանքները դուռ էին բացել նրանց փրկության համար: Տե՛ս «փառք» թեմայի շուրջ ավելի ամբողջական գրառում Եփես. 1:6-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3:14-19
[14]Այս պատճառով, ծնկի եմ իջնում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առջև, [15]Որից ամբողջ ընտանիքը՝ թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա անվանվել է, [16]որ Իր փառքի ճոխության համաձայն ձեզ շնորհի Իր Հոգու զորությամբ ամրապնդվել ներսի մարդու մեջ. [17]որ Քրիստոսը հավատով բնակվի ձեր սրտերում. [18]որ դուք, սիրով արմատացած և հաստատված լինելով, բոլոր սրբերի հետ միասին ի վիճակի լինեք ըմբռնելու, թե ինչ է լայնությունը ու երկարությունը, խորությունն ու բարձրությունը, [19]և ճանաչե՛ք Քրիստոսի սերը, որ ամեն հասկացողությունից վեր է, որ լցվեք Աստծո ամեն լիությամբ:

3:14 «Այս պատճառով» Պողոսը վերադառնում է իր սկզբնական նպատակին (տես՝ Եփես. 3:1, այսինքն՝ իր աղոթքին). ուշադրություն դարձրեք, որ վարդապետական բաժինը բացվում է Եռամեկ Աստծուն աղոթելով (տես՝ Եփես. 1:3-14) և փակվում է աղոթքով:

❖ **«ծնկի եմ իջնում»** Կանգնած դիրքը, ոչ թե խոնարհումը, համարվում էր հրեական աղոթքի սովորական դիրքը: Սա ցույց է տալիս Պողոսի աղոթքի եռանդը (տես՝ Մատթ. 6:5, Մարկոս 11:25, Ղուկ. 18:11, 12, 22:41, Գործք 7:60, Փիլ. 2:10):

3:14-15 «Հայր ...ընտանիքը» Սա հունարենի *pater* և *patri* տերմինների բառախաղ է: Ուշադրություն դարձրեք Հայր բառի վրա շեշտադրությունը, ինչպես Եփես. 1:3-14-ում է: Արարիչ Աստվածը բոլոր կենդանի էակների և նրանց սոցիալական հաստատությունների հարացույցն է՝ օրինակը (այսինքն՝ ցեղերը, ազգերը):

3:14-17 «Հայրը...Հոգին...Քրիստոսը» Ուշադրություն դարձրե՛ք Եփես. 1:3-14-ում Երրորդության գործը: Ճիշտ է, որ «Երրորդություն» տերմինը ՆԿ-ում չի կիրառվում: Սակայն կան բազմաթիվ հատվածներ՝ համարներ, որտեղ աստվածային երեք անձիք նշվում են մի ընդհանուր

համատեքստում (տես՝ Մատթ. 3:16-17, 28:19, Հովհ. 14:26, Գործք 2:33-34, 38-39, Հռոմ. 1:4-5, 5:15, 8:9-10, 1 Կորնթ. 12:4-6, 2 Կորնթ. 1:21-22, 13:14, Գաղ. 4:4-6, Եփես. 1:3-14, 17, 2:18, 3:՞14-17, 4:4-6, 2 Թեսաղ. 2:13, Տիտոս 3:4-6, 1 Պետ. 1:2, Հուդա 1:20-21): Տե՛ս Հատուկ Թեմա. Երրորդություն:

KJV թարգմանությունը ավելացնում է «մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը», սակայն այս արտահայտությունը բացակայում է հնագույն հունարեն P^{46}, א, A, B, C ձեռագրերում, և ոչ էլ առկա է Ջերոմի և Օգոստինոսի հունարեն տեքստերում: Այս հավելումը հանդիպում ենք ունցիալ (մեծատառերով) ձեռագրերում՝ $א^{c}$, D, G, K և Ոսկեբերանի կողմից օգտագործված հունարեն տեքստում:

Մեկ աստվածային էությամբ երեք աստվածային անձերի հասկացությունը (այսինքն՝ միաստվածությունը) դժվար է հասկանալ: Սակայն, եթե Հիսուսը Աստված է և Հոգին անձ է, ապա Աստվածաշնչին հավատացողները ստիպված են հաստատելու եռամեկ միությունը: Տե՛ս Հատուկ Թեմա. Երրորդություն, Եփես. 1:3-ում:

3:15 «երկնքում և երկրի վրա» Սա վերաբերում է ողջ և մեռած հավատացյալներին (տես՝ Փիլ. 2:10):

3:16-19 Պողոսի աղոթքը կարելի է ուրվագծել երկու քերականական առանձնահատկությամբ՝

1. Երեք նպատակի պարագաներ (*hina*)
   ա. Եփես. 3:16, Աստված կշնորհի (առրիստ ստորադասական)
   բ. Եփես. 3:18, Աստված լիովին կարողություն կտա՝ ի վիճակի կդարձնի (առրիստ ստորադասական)
   գ. Եփես. 3:19բ, Աստված կլցնի (առրիստ ստորադասական)
2. Չորս առրիստ (անորոշ կատարյալ) անորոշ դերբայներ՝
   ա. Եփես. 3:16, «դուք ամրապնդվելու»
   բ. Եփես. 3:17, «Քրիստոսը բնակվի ձեր սրտերում»
   գ. Եփես. 3:18, «դուք . . . ըմբռնելու»
   դ. Եփես. 3:19, «ճանաչեք»

Այս պարբերությունը ներկայացնում է Պողոսի աղոթքը բոլոր այս եկեղեցիների հավատացյալների համար, որ նրանք մնան հաստատ ու աներեր մնան Աստծո զորությամբ Քրիստոսի գործերի միջոցով և Սուրբ Հոգու տված կարողությամբ դիմակայեն (1) սուտ վարդապետներին և (2) մեղավոր աշխարհի հալածանքներին:

3:16 «Իր փառքի ճոխության համաձայն» «Ճոխություն» բառը Պողոսի սիրելի տերմիններից մեկն է, որը նկարագրում է Աստծո շնորհքը Քրիստոսում (տես՝ Եփես. 1:7, 18, 2:4,7, 3:8, 16): Աստծո էությունը Աստծո զորության և կարողության բուն աղբյուրն է՝ բանալին:

❖ **«ներսի մարդու մեջ»** Հոգևոր աճը ներքին է, սակայն այն խթանվում է արտաքին ճնշման միջոցով: Պողոսը հաճախ էր օգտագործում ներքին և արտաքին մարդու միջև հակադրությունը: Ներքին մարդը հոգևորն է, մինչդեռ արտաքին մարդը՝ ֆիզիկականը: Ներսի մարդը արդեն իսկ Նոր Դարաշրջանի՝ Աստծո թագավորության մասն է կազմում, սակայն արտաքին մարդը դեռևս մեռնում է և պայքարում է հին դարի՝ հին մեղավոր բնության և աշխարհի ընկած համակարգի դեմ (տես՝ Եփես. 2:1-3):

3:17 «որ Քրիստոսը հավատով բնակվի ձեր սրտերում» Սա անորոշ կատարյալ ներգործական է, որը մատնացույց է անում հավատքի հատուկ գործողություն: ՆԿ-ում գեղեցիկ սահմանություն կա Որդու և Սուրբ Հոգու ներբանկության միջև: Հոգու գործն է (տես՝ Հովհ. 14-16)՝

1. մարդուն հայտնել, որ Հիսուսի կարիքն ունի (այսինքն՝ մարդկային մեղքը)
2. հայտնել Հիսուսին (այսինքն՝ Ավետարանը)
3. քաշել դեպի Հիսուսը
4. մկրտել Հիսուսի մեջ (տես՝ 1 Կորնթ. 12:13)

5. հավատացյալների մեջ Հիսուսին ձևավորել (այսինքն՝ Քրիստոսակերպությունը), տե՛ս Հատուկ Թեմա. Սիրտ, Կող. 2:2-ում

Տե՛ս Հատուկ Թեմա. Հիսուսը և Հոգին, Կող. 1:26-ում:

❖ **«արմատացած»** Անգլերենում սա վաղակատար կրավորական դերբայ է, որը կարող էր թարգմանվել «արմատացած եք եղել և շարունակում եք արմատացած մնալ Աստծով»: Պողոսը օգտագործում է այս գյուղատնտեսական փոխաբերությունը միայն այստեղ և Կող. 2:7-ում: Այս երկու վաղակատար կրավորական դերբայները այս հավատացյալների և եկեղեցիների հանդեպ իր վստահությունը արտահայտելու միջոց են:

❖ **«և հաստատված»** Սա երկրորդ վաղակատար կրավորական դերբայն է: Սա շինարարական փոխաբերություն է: Գյուղատնտեսական և շինարարական փոխաբերությունների նմանատիպ մի խառնուրդ էլ կարելի է գտնել Եփես. 2:20-22-ում և 1 Կորնթ. 3:9-ում:

3:18-19 «ըմբռնելու. . . ճանաչելու» Սրանք երկուսն էլ առիստ (անորոշ կատարյալ) անորոշ դերբայներ են (այսինքն՝ այս աղոթքի մեջ առկա են չոր առիստ անորոշ դերբայներ, Եփես. 3:16-19): Գիտության՝ ճանաչողությանը վրա այս շեշտադրությունը հակազդում էր գնոստիկ սուտ վարդապետների բացառիկ մտավոր հայտարարություններին: Այն կարող է նկատի ունենալ նորահայտ Աստծո խորհուրդը, Քրիստոսի մեջ հրեայի և հեթանոսի միավորումը (տես՝ Եփես. 3:9):

3:18 «ի վիճակի լինեք» Սա երկրորդ նպատակի պարագան է: Պողոսը աղոթում է, որ բոլոր հավատացյալները զորանան և ի վիճակի լինեն կատարելապես հասկանալու ավետարանը (այսինքն՝ «ըմբռնեն» և «ճանաչեն»):

❖ **«բոլոր սրբերի հետ»** Այս տերմինը մշտապես հոգնակի թվով է, բացի Փիլ. 4:21-ից, որը նույնպես ունի հավաքական համատեքստ: Քրիստոնյա լինել նշանակում է լինել համայնքի մեջ: Նաև ուշադրություն դարձրեք, որ Աստծո կամքը հավատացյալների հաստությունն է (տես՝ Եփես. 4:13): Տե՛ս Հատուկ Թեմա. Սրբեր, Կող. 1:2:

3:19 «գերազանցում է / վեր է» Քրիստոսի սերը ավելի մեծ է, քան մարդկային գիտությունը: *Huperballō* Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի *Huper* բաղադրյալների կիրառությունը, Եփես. 1:19-ում: Այս բառը կիրառվում է Եփես. 1:19, 2:7 և 3:19-ում: Մեկ այլ *huper* բաղադրյալ կիրառվում է Եփես. 3:20-ում (*huperekperissou*), որը նաև գործածվում է 1 Թեսաղ. 3:10և 5:13-ում:

❖ **«լցված Աստծո ամեն լիությամբ»** Այս աղոթքի մեջ սա նպատակի երրորդ պարագան է: Սա չի վերաբերում ներբնակեցված Քրիստոսին կամ Հոգուն՝ Եփես 3:17, այլ գնոստիկ սուտ վարդապետների հետ կապված բառախաղ է, որոնք շեշտադրում էին լեցունությունը (*plērōma*) որպես հատուկ գիտություն, որը մարդուն թույլ էր տալիս անցնելու հրեշտակային ոլորտների միջով (*աէոններ*) դեպի երկինք: Քրիստոսն է ճշմարիտ «Աստծո լեցունությունը» (տես՝ Եփես. 1:23, Կող. 2:9):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3:20-21
[20]Արդ Նրան, Ով կարող է խիստ առատությամբ մեր խնդրածից կամ խորհածից շատ ավելին անել, ըստ այն զորության, որ գործում է մեր մեջ, [21]Նրան փա՛ռք տվեք եկեղեցում Քրիստոս Հիսուսով, բոլոր դարերում, հավիտյանս հավիտենից: Ամեն:

3:20 «Նրան, Ով կարող է» Այսպես սկսում է Պողոսի կողմից գրված դավանաբանություններից սքանչելի մեկը, որը փակում է այս շրջանառվող նամակի վարդապետական բաժինը: Սա մի հրաշալի տիտղոս է Աստծո համար, որը ՆԿ-ում կիրառվում է երեք անգամ (տես՝ Հռոմ. 16:25, Հուդա 24): Այս տեքստերից յուրաքանչյուրը գործ ունի Աստծո գործունեությունների տարբեր առանձնահատկությունների հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՂՈՍԻ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՂՈԹՔԸ ԵՎ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏԾՈՒՆ

SPECIAL TOPIC: PAUL'S PRAISE, PRAYER, AND THANKSGIVING TO GOD

Պողոսը փառաբանող անձ էր: Նա գիտեր Հին Կտակարանը: Սաղմոսագրքի յուրաքանչյուր առաջին չորս բաժանումները (այսինքն՝ գրքերը) ավարտվում են դավանաբանություններով (տես՝ Սաղմ. 41:13, 72:19, 89:52, 106:48): Մարդիկ, ովքեր ճանաչում են Աստծուն, հաճախ են փառաբանում և մեծարում Նրան:

1. Նրա նամակներում բացման պարբերությունները՝
   ա. բացման գոհության կամ ողջույնի խոսքեր (տես՝ Հռոմ. 1:7, 1 Կորնթ. 1:3, 2 Կորնթ. 1:2)
   բ. բացման օրհնություններ (*eulogētos,* տես՝ 2 Կորնթ. 1:3-4, Եփես. 1:3-14)
2. փառաբանության փոքրիկ պոռթկումներ
   ա. Հռոմ. 1:25, 9:5
   բ. 2 Կորնթ. 11:31
3. դավանաբանություններ (առանձնահատուկ են [1] *doxa* /այսինքն՝ փառք/ և [2] «հավիտյանս հավիտենից» տերմինների կիրառությամբ)
   ա. Հռոմ. 11:36, 16:25-27
   բ. Եփես. 3:20-21
   գ. Փիլ. 4:20
   դ. 1 Տիմ. 1:17
   ե. 2 Տիմ. 4:18
4. գոհություններ (այսինքն՝ *eucharisteō*)
   ա. նամակների բացմանը (տես՝ Հռոմ. 1:8, 1 Կորնթ. 1:4, 2 Կորնթ. 1:11, Եփես. 1:16, Փիլ. 1:3, Կող. 1:3, 12, 1 Թեսաղ. 1:2, 2 Թեսաղ. 1:3, Փիլիմոն 1:4, 1 Տիմ. 1:12, 2 Տիմ. 1:3)
   բ. գոհանալու կոչ (տես՝ Եփես. 5:4, 20, Փիլ. 4:6, Կող. 3:15, 17, 4:2, 1 Թեսաղ. 5:18)
5. Գոհության կարճ պոռթկումներ
   ա. Հռոմ. 6:17, 7:25
   բ. 1 Կորնթ. 15:57
   գ. 2 Կորնթ. 2:14, 8:16, 9:15
   դ. 1 Թեսաղ. 2:13
   ե. 2 Թեսաղ. 2:13
6. Փակման գոհության խոսքեր
   ա. Հռոմ. 16:20,24
   բ. 1 Կորնթ. 16:23-24
   գ. 2 Կորնթ. 13:14
   դ. Գաղ. 6:18
   ե. Եփես. 6:24

Պողոսը ճանաչում էր Եռամեկ Աստծուն թե՛ աստվածաբանորեն և թե՛ կյանքի փորձով: Իր նամակները նա սկսում է աղոթքով և փառաբանությամբ: Նամակի ներկայացման միջնամասերում նա կանգ է առնում փառաբանության և գոհության համար: Նամակների եզրափակմանը նա միշտ հիշում է աղոթել, փառաբանել և գոհանալ Աստծուց: Պողոսի նամակները շնչում են աղոթքով, փառաբանությամբ և գոհությամբ: Նա ճանաչում էր Աստծուն, նա ճանաչում էր իրեն, և նա գիտեր ավետարանը:

NASB, NKJV	**«խիստ առատությամբ»**
NRSV	**«շատ ավելի առատությամբ»**

TEV **«շատ ավելին»**
NJB **«անսահման ավելին»**

Սա Պողոսին բնորոշ գերադրական բաղադրյալի կիրառություն է, որը նշանակում է «չափազանց, խիստ առատ» (տես՝ 1 Թեսաղ. 3:10, 5:13): Տե՛ս Հատուկ Թեմա. Պողոսի *Huper* բաղադրյալների կիրառությունը, Եփես. 1:19-ում: Այն իրականում վատ քերականություն է, սակայն հրաշալի աստվածաբանություն:

❖ **«ըստ այն զորության, որ գործում է մեր մեջ»** Սա Հոգու միջոցով Քրիստոսի ներբնակեցման մասին խոսք է (տես՝ Եփես. 3:7, 16-17, Գաղ. 2:20, Կող. 1:27): Յուրաքանչյուր հավատացյալի ներսում Սուրբ Հոգու մշտական ներբնակեցումը Հին և Նոր Ուխտերի միջև տարբերությունն է, այսինքն՝ «նոր սիրտ», «նոր միտք», «նոր հոգի» (տես՝ Եզեկ. 36:26-27):

3:21 «փա՛ռք եկեղեցում Քրիստոս Հիսուսով» Ահա Հիսուսի Հարսի և Մարմնի՝ Եկեղեցու մեծարման վայրը (տես՝ Եփես. 1:23): Իր արյամբ գնված, Հոգով լցված ժողովուրդը: «Եկեղեցի» տերմինը հունարեն երկու տերմիններից է՝ «կանչել» և «դուրս»: Այն կիրառվում էր հունահռոմեական մշակույթի մեջ քաղաքային ժողովների համար (տես՝ Գործք 19:32): Հրեական կյանքում այս տերմինը սովորաբար թարգմանում էր «Իսրայելի ժողովք» կամ *qahal* կարևորագույն աստվածաբանական հասկացությունը (տես՝ Ելից 12:6, 16:3, Ղևտ. 4:13, Թվոց 14:5, 20:6, 2 Օր. 5:22, 9:10, 10:4, 18:16): Առաջին հավատացյալներն իրենց համարում էին ճշմարիտ «Աստծո ժողովուրդ» (տես՝ Գաղ. 6:16, 1 Պետ. 2:5-9, Հայտն. 1:6):

❖ **«հավիտյանս հավիտենից»** Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (ՀՈՒՆԱՐԵՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ)
SPECIAL TOPIC: FOREVER (GREEK IDIOMS)

Հունարեն դարձվածքաբանական արտահայտություններից մեկն է «դարեր շարունակը» (տես՝ Ղուկ. 1:33, Հռոմ. 1:25, 11:36, 16:27, Գաղ. 1:5, 1 Տիմ. 1:17), որը կարող է արտահայտել եբրայերենի *olam* տերմինը: Տես Ռոբերտ Բ. Գրդլսթոունի, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, էջ՝ 319-321, և Հատուկ Թեմա. Հավիտյանս (*'Olam*), էջ՝ . . . /Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*, pp. 319-321, and Special Topic: Forever (*'Olam*)/:

Այս արտահայտության հետ կապ ունեցող խոսքերից են «դարեդարը» (տես՝ Մատթ. 21:19, Մարկ. 11:14, Ղուկ. 1:55, Հովհ. 6:58, 8:35, 12:34, 13:8, 14:16, 2 Կորնթ. 9:9) և «բոլոր դարերում» (տես՝ Եփես. 3:21): Թվում է, թե ոչ մի տարբերություն չկա «հավիտյան» բառի հունարեն այս դարձվածքների միջև: «Դարեր» տերմինը կարող է լինել ՀՈԳՆԱԿԻ փոխաբերական իմաստով ըստ ռաբբիական քերականական կառուցվածքի, որը կոչվում է «ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՈՒԹՅՈՒՆ» կամ այն կարող է վերաբերել մի քանի «դարերի» հասկացությանը՝ համաձայն հրեական «ամբարշտության դար /ժամանակաշրջան/», «գալիք դար» կամ «արդարության դար» նշանակության (տես՝ Հատուկ Թեմա. Այս և Գալիք Դարաշրջանները, էջ՝ 21):

❖ **«ամեն»** Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄԵՆ
SPECIAL TOPIC: AMEN

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ
   Ա. «Ամեն» տերմինը ծագել է Եբրայերեն հետևյալ բառերից՝
      1. «ճշմարտություն» (*emeth*, BDB 49)

2. «ճշմարտացիություն» (*emun, emunah,* BDB 53)
3. «հավատք» կամ «հավատարմություն»
4. «վստահություն» (*dmn,* BDB 52)

Բ. Այս տերմինի ստուգաբանությունը նշում է մարդու ֆիզիկական կայուն վիճակը: Դրա հակառակը կլիներ անկայունը, սայթաքելին (տես՝ Սաղմ.35:6; 40:2; 73:18; Երեմիա 23:12) կամ գայթակղիչը (տես՝ Սաղմ.73:2): Այս բառացի կիրառությունից էլ ձևավորվել է հավատարիմ, վստահելի, ազնիվ և հուսալի բառերի լայնիմաստ փոխաբերությունը (տես՝ Եբր.2:4):

Գ. Հատուկ կիրառությունը (տես՝ <u>Հատուկ Թեմա. Հավատալ, Վստահել, Հավատք և Հավատարմություն ՀԿ-ում</u>)

1. Սյուն, 4 Թագ.18:16 (1 Տիմ.3:15)
2. Վստահություն, Ելից 17:12
3. Կայունություն, Ելից 17:12
4. Հաստատություն, Ես.33:6
5. Ճշմարիտ, 3 Թագ.10:6; 17:24; 22:16; Առակ.12:22
6. Հաստատ, 2 Մնաց.20:20; Եսայի 7:9
7. Վստահելի (Թորա), Սաղմ.119:43,142,151,160

Դ. ՀԿ-ում երկու այլ տերմիններ են կիրառվում գործող հավատքի համար՝

1. *batach* (BDB 105), վստահություն
2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես՝ Ծննդ.22:12)

Ե. Վստահության կամ վստահելիության նշանակությունից ձևավորվեց եկեղեցական կիրառությունը, որը գործածվում էր հաստատելու մեկ ուրիշի ճշմարիտ կամ վստահելի հայտարարությունը (տես՝ Թվոց 5:22; 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Նեեմ.5:13; 8:6; Սաղմ.41:13; 72:19; 89:52; 106:48; Երեմ.11:5; 28:6):

Զ. Այս տերմինի հետ կապված աստվածաբանական բանալին մարդկության հավատարմությունը չէ, այլ ՅԱՀՎԵի (տես՝ Ելից 34:6; 2 Օր.32:4; Սաղմ.108:4; 115:1; 117:2; 138:2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵի և Նրա խոստումների գթառատ, նվիրված, ուխտի հավատարմությունն է: Ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵին, պետք է լինեն Նրա նման (տես՝ Ամբ.2:4): Աստվածաշունչը մարդկության մեջ Իր պատկերը (տես՝ Ծննդ.1:26-27) վերականգնելու Աստծո պատմությունն ու արձանագրությունն է: Փրկությունը վերականգնում է մարդկության հնարավորությունը Աստծո հետ մտերմիկ հարաբերություն ունենալու: Սա է մեր ստեղծվելու նպատակը:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» բառի ՆԿ-ում ընդունված է կիրառել որպես հայտարարության ճշմարտացիության ամփոփիչ եկեղեցական հաստատում (1 Կորնթ.14:16; Հայտն.1:7; 5:14; 7:12):

Բ. ՆԿ-ում այս տերմինը ընդունված է կիրառել որպես աղոթքի փակման բառ (տես՝ Հռոմ. 1:25; 9:5; 11:36; 16:27; Գաղ.1:5; 6:18; Եփես.3:21; Փիլ.4:20; 2 Թեսաղ.3:18; 1 Տիմ. 1:17; 6:16; 2 Տիմ.4:18):

Գ. Հիսուսը միակն էր, որ այս տերմինը կիրառեց (կրկնապատիկ անգամ Հովհաննես Ավետարանում՝ 25 անգամ, այսինքն՝ Հովհ.1:51; 3:3,5,11; և այլն) ներկայացնելու կարևորագույն հայտարարությունները (տես՝ Ղուկ.4:24; 12:37; 18:17,29; 21:32; 23:43):

Դ. Այն Հայտն. 3:14-ում կիրառվում է որպես Հիսուսի անուններից մեկը (նաև ուշադրություն դարձրեք 2 Կորնթ.1:20; հավանաբար ՅԱՀՎԵի անուններից՝ Ես.65:16):

Ե. Հավատարմության կամ հավատքի, վստահելիության կամ վստահության գաղափարն արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմինով, որն անգլերենում թարգմանվում է որպես «վստահություն», «հավատք», «հավատալ» (տես՝ Հատուկ Թեմա. Հավատք, Հավատալ կամ Վստահություն):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս էր Պողոսը սովորել իր աստվածաբանությունը:
2. Ինչո՞ւ է Պողոսն իրեն կոչում «սրբերից ամենափոքրը»:
3. Ինչո՞ւ էր Աստծո խորհուրդը ծածկված անցած դարերում:
4. Ի՞նչ է եկեղեցու նպատակը հրեշտակային տիրույթում:
5. Թվարկե՛ք այն երեք բաները, որոնք խնդրում է Պողոսը Եփես. 3:16-19-ում, որ Աստված շնորհի հավատացյալներին:
6. Ի՞նչ է նշանակում Քրիստոնյաները ներբնակեցված են: